Հավելված 1
Սևան համայնքի ավագանու՝
16.11.2022թ. թիվ 102-Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար, յուրաքանչյուր համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 10.0 տոկոս չափով հավելավճար:
2. Սահմանել համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճար՝

2.1 հինգից տասը տարի՝ 5.0 տոկոս չափով հավելավճար:
2.2 տասնմեկից տասնհինգ տարի՝ 7.0 տոկոս չափով հավելավճար:
2.3 տասնհինգ և ավելի տարի՝ 10.0 տոկոս չափով հավելավճար:

3. Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարը տրվում է յուրաքանչյուր համայնքային ծառայողին ընդունող և ազատող իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ներկայացմամբ: